

ՈՒԴԻՆԵՐԻ
ԷԹՆՕ-ԵՒ ԴԱԻԱՆԱԿԱՆ
ԻՆՔՆԱՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԵԱՆ
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ (ԺԹ.- Ի. դդ.)
ՀՐԱՆՈՒՇ ԽԱՌԱՏԵԱՆ

Ադրբեջանի Վարդաշենի եւ Կուտկաշենի շրջաններում դեռեւս պահպանուած փոքրաթիւ ուղիների մասին բաւական հարուստ սկզբնական գրականութիւն եւ միաժամանակ ըստ էութեան խիստ աղքատիկ ուսումնասիրութիւններ կան: ԺԹ. դ. եւ Ի. դ. սկզբին ուղիների վերաբերեալ ուսումնասիրութեան յաւակնութիւն ունեցող գրականութեան մեծ մասն այսօր գլխաւորապէս սկզբնական աղբիւրի արժէք ունի:

Վերոյիշեալ աղբիւրները վկայում են, որ ԺԹ. դ. իրենց էթնիկական ինքնագիտակցութիւնը ակտիւ կամ պասիւ պահած ուղիներով բնակեցուած բնակավայրերը կարելի է բաժանել երեք խմբի. ուղիախօս-քրիստոնեայ, թրքախօս-քրիստոնեայ, թրքախօս-մահմեդական: Առաջինը վերաբերում է գլխաւորապէս Վարդաշեն¹ գիւղաքաղաքին եւ Նիթ խոշոր գիւղին, որոնցից առաջինում մինչ օրս պահպանուել են վրացադաւան ուղիներ (դաւանական եզրերն օգտագործւում են ուղիական ընկալման մոդէլով), Նիթում՝ հայադաւան ուղիներ: Մասնաւորեցնենք, որ ուղիախօս քրիստոնեաների հայադաւան հատուածի դրպրոցական կրթութեան լեզուն եղել է հայերէնն ընդհուպ մինչեւ Ի. դ. 50ականները, իսկ վրացադաւանները ԺԹ. դ. վերջից անցան ուսուերէնով ուսուցման: Երկրորդ դէպքը վերաբերում է Զօոււլու, Միրզաբէյլու, Սուլթան-Նուխի, Վարդանլու, Փաղառ գիւղերին, որոնց մասին ծագումով ուղի Ղազար քահանայ Յովսէփեանը գրում է թէ դրանք «թրքախօս-հայադաւան» գիւղեր են²: Երրորդ դէպքը, որին այս յօդուածում չենք անդրադառնայ, տարածւում է գիւղերի մի մեծ խմբի վրայ, որոնց բնակչութիւնն աստիճանաբար թրքախօս եւ մահմեդական էր դարձել ԺԸ. դարի ընթացքում, բայց ընդհուպ մինչեւ Ի. դարի սկզբները (մասնակիօրէն՝ մինչեւ այսօր) պասիւ վիճակում պահպանել էր ուղիական ծագման ինքնագիտակցութիւնը (յիշում էին, որ իրենց պապերն ուղիներ են եղել)³:

Այստեղ խնդիր չգնելով քննարկելու ուղիների այս կամ այն դաւանանքն ընդունելու ժամանակի հարցը, նշենք միայն, որ կրօնների եւ դրանց այս կամ այն ուղղութեան ուղիների դաւանելը հեղինակներին

Հարկադրել է գործածել էթնանունների եւ դաւանանունների բաւական խրթին համադրումներ, որոնք իւրաքանչիւր դէպքում կոնկրէտացնելու կարիք ունեն՝ հասկանալու թէ խօսքն իրականում ու՛մ, ո՛ր ժողովրդի մասին է: Օրինակ՝ Յովսէփեանն «ուտիացի կին»⁴, «ուտիացոց աշխարհի թրքախօս եւ ուտիախօս գիւղեր»⁵ հազուադէպ անուանումներին առընթեր, շատ յաճախ օգտագործում է «ուտիացի հայ»⁶, «ուտիախօս եւ թրքախօս հայ կանայք»⁷, «ուտիացոց աշխարհի հայ ժողովուրդ»⁸, «ուտիացի հայ համայնք»⁹, «քրիստոնեայ եւ թրքացած հայեր»¹⁰ եւ այլ արտայայտութիւններ: Յովսէփեանն, անշուշտ, ուղիներին հայերի հետ չի շփոթում. վերջիններիս վերաբերեալ նա գրում է. «Ուտիացոց աշխարհում կան մօտաւորապէս 3000 տուն հայ ընտանիքներ, որոնք գաղթել են զանազան ժամանակներում Արցախի, Խոյի, Թեհրանի եւ Սպահանի կողմերից, որոնք խօսում են իրենց հետ բերած հայ բարբառներով եւ որոնք տեղացիներից կոչւում են սարեցի հայեր (դաղլը էրմանի): Սարեցի հայերը բնակւում են Նուխու հարաւային կողմերի լեռների սարահարթերի եւ բլուրների վրայ»¹¹:

Աւելի վաղ շրջանի հաղորդումները հնարաւորութիւն են տալիս նկատելու, որ ուղի-հայ էթնանունների գուգահեռութիւնը, երբեմն էլ՝ մէկը միւսով փոխարինելն, ուղիական էթնիկ զանգուածի շրջանակներում ունի իր ականդրութիւնը: Այսպէս, Ժ. Դ. Դականներին Նուխու գաւառի պետական բնակավայրերի բնակչութեան տնտեսական կենցաղը հետազօտող Ա. Արասխանեանցը մասնաւորապէս գրում է. «Նուխու գաւառի հայ լուսաւորչական բնակչութիւնը ծագմամբ, լեզուով եւ պատմական ճակատագրերով միասեռ չէ: Գաւառի բնիկ հայեր հանդիսանում են ինքնատիպ լեզուով խօսող ուղիները: Նրանք գրադեցնում են Նիփ եւ Վարդաշէն գիւղերը: Ուղիերէնն այլեւս ոչ մի տեղ չի հանդիպում: Որոշ գիւղերում հայերը փոխառել են թաթարերէնը, որով բացատրւում են մայրենի լեզուի հետ միասին: Այսպիսի հայեր ապրում են Սուլթան-Նուխի, Զօոււլու-հայկական, Միրզաբէյլու, Վարդանյու, Մարխ, Ենգիբենդ գիւղերում»¹²: Կասկած չի կարող լինել, որ խօսքն ուղիների մասին է՝ չնայած հեղինակը նրանց կոչում է «հայեր»: Բուն հայերի մասին Արասխանեանցի լիչեալ տեքստի շարունակութեան մէջ ասւում է. «բացառապէս հայերէնով խօսում են լեռնային հայկական գիւղերի եւ Զաֆարաբադ-Խոյ, Ճալթթ, Ալեար եւ Փաղառ գիւղերի բնակիչները: Լեռնային հայկական գիւղերի բնակիչները, ինչպէս նաեւ ալեարցիները, ճալթցիները եւ Զաֆարաբադի հայերը եկել են այստեղ Ղարաբաղից, մասամբ՝ պարսկական Խոյ գաւառից»¹³:

Հեղինակը երբեմն՝ ուղիներ, երբեմն՝ հայեր է կոչում նոյնիսկ Վարդաշէնի եւ Նիփի բնակչութեանը: Այսպէս, վերոյիշեալ աշխատանք-

քի էջ 19, 97, 107ում այս բնակավայրերում բնակչութիւնը վաւերաց-
ւում է որպէս ուղիներ, իսկ նոյն էջ 19ում Արասխանեանցը գրում է.
«Խառը կազմ ունեցող գիւղերից միայն երկուսում՝ Վարդանյուում եւ
Փաղառում հայերը¹⁴ փոքրամասնութիւնն են, միւսներում՝ մեծամաս-
նութիւնը: Այսպէս, Նիփում նրանք կազմում են բնակչութեան աւելի
քան 9/10ը, Սուլթան-Նուսիրում՝ 8/7ը, Վարդաշէնում՝ 2/3ը»: Քիչ յետոյ,
հեղինակն աւելացնում է. «Նուխու գաւառի ...հայ լուսաւորչականնե-
րը ...պատկանում են ուղիական ցեղի բնակիչների կազմին»¹⁵: Այսպի-
սով հեղինակի յիշատակած գիւղերը, անկասկած, ուղիական են:

Նոյն՝ 1870ականներին, Թիֆլիսի Մշակ թերթն իր ընթերցողներին
յայտնում է. «այս գիւղը (Վարդաշէնը - Հ.Խ.) կազմուած է հայերից
(որոնք գլխաւորապէս ուղիերէն են խօսում), վրացիներից, թաթարնե-
րից եւ հրեաներից... չնայելով, որ նրանք գրեթէ ամէնքը խօսում են
հայերէն, բայց ուղիերէնը նրանց մօտ աւելի տարածուած լեզու է եւ
դրանով խօսում են մինչեւ անգամ շատ վրացիներ եւ հրեաներ»¹⁶:

Ժ. Գ. վրացադաւան ուղիներ կային միայն Վարդաշէնում: Ա-
րասխանեանցը մասնաւորապէս վկայում է. «Նուխու գաւառում ուղ-
ղափառներ հանդիպում են միայն մէկ գիւղում՝ Վարդաշէնում:
Նրանք, հայ լուսաւորչականների նման, պատկանում են ուղիական
ցեղին: Գաւառում ուղղափառ ուղիները յայտնի են «գիւրջի», այսին-
քըն վրացի անուամբ: Խօսում են ուղիերէն եւ ամէն ինչով նման են
հայ լուսաւորչականներին, որոնց հետ ապրում են խառը, առանձին
թաղամաս չկազմելով: Սակայն իրենց ներքին կառուցուածքում
նրանք առանձին համայնք են կազմում, ճիշդ այնպէս, ինչպէս հայ լու-
սաւորչականները եւ սուրենիները»¹⁷:

«Օրթոդոքս ուտիներն իրենց ուտի գիւրջի (վրացի ուտի) են ան-
ւանում», - հաւաստում է նաեւ ազգագրագէտ Երուանդ Լալայեանը¹⁸:
Ուղիների այս խումբը վրացիներ են անուանում նաեւ Ս. Ջալալեան-
ցը¹⁹, Աղբուրի²⁰, Մշակի²¹ հեղինակները: «Վրացիներ» ցեղանունն այս-
տեղ, ինչպէս յաճախ «հայն» ուղիների վերաբեմամբ, էթնիկ բովան-
դակութիւն չունի: Այն տարածւում է Վարդաշէնի վրացադաւան ու-
ղիների վրայ:

Ուղիները, սակայն, իրենց ներքին յարաբերութիւններում երբեք
չեն գործածել ո՛չ «հայ», ո՛չ «վրացի» եւ ո՛չ «գիւրջի» ցեղանունները: Ի.
Գ. սկզբին Լալայեանը վկայում է, որ ուղիախօս հայադաւան Նիփ եւ
Վարդաշէն գիւղաքաղաքների բնակիչներն իրենք իրենց կոչում էին
«ուտի» կամ «քչտոն» եւ միայն օտարներին ներկայանալիս՝ «հայ» կամ
«էրմանի»²²: Չնայած «քչտոն» բառը նշանակում էր քրիստոնեայ,
բայց կիրառւում էր ոչ թէ ընդհանրապէս քրիստոնեաների նկատ-
մամբ, այլ միայն հայադաւանների՝ տարածուելով նաեւ հայերի վրայ:

Ուշագրաւ է, որ վրացադաւան ուղիներն իրենք իրենց քշտոնն չէին կոչում²³։ Նրանք գտնում էին, որ «քշտոնը» միայն «հայ ուղիներն» են եւ հայերը։

Եւ Նիժում, եւ Վարդաշէնում «ուղի», «քշտոն» ինքնանուանումների կողքին գործածւում էր նաեւ «նէոյշի» կամ «նոյշի» բառը²⁴, որ ուղիներէնում նշանակում է «ստրուկ, գերի, անազատ մարդ»²⁵։

Քշտոնից գատ, ուղիները հայերին կոչում էին նաեւ «հայ», «արմի», «արմէին», բայց ո՛չ երբեք՝ «ուղի» կամ «նէոյշի», եւ միշտ գիտակցում էին իրենց առանձնութիւնը նրանցից։ Մակար եպօ. Բարխուդարեանը շատ լաւ է գիտակցել այդ երեւոյթը՝ սովորաբար նրանց վերաբերեալ գրելով «հայադաւան», «բնիկ», «ազգաւ ուտի»՝ խուսափելով «հայեր» կոչելուց։ Յովսէփեանի «ուտիացի հայ», «ուտիացոց աշխարհի թրքախօս եւ ուտիախօս հայեր», «ուտիացոց աշխարհի հայ ընտանիքներ» եւ այլ արտայայտութիւնները²⁶ ո՛չ թէ աշխարհագրական ընկալումներ ունեն, այլ էթնիկ երանգ։ Նրանք ո՛չ թէ հայեր են ընդհանրապէս, այլ՝ ուտիացի հայեր են, - պետք է հասկանալ՝ ուղիներ են, բայց հայադաւան։


էթնիկ պատկանելութիւնն ըստ դաւանանքի որոշելու այսրկովկասեան միջնադարեան աւանդոյթը շարունակւում էր։

Մակայն այստեղ մի նուրբ պահ կայ. երեւոյթների ընկալման ուղիական մոդէլում հայադաւան ամբողջութիւնը, ուղիերէն ասուած՝ «քշտոն» խումբը, ո՛չ թէ դաւանական, այլ՝ էթնիկ ընկալում է։ Նիժ գիւղի Դալլաքլու թաղի գերեզմանոցի տապանաքարերից մէկի արձանագրութիւնը յայտնում է․

1. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԶԱՌԱՄԵԱԼ ԾԵՐՈՒՆԻՆ ԻՇԽԱՆ ՆԻՓԵՑԻՈՑ
ՊՈՂՈՍ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻՆ. ԼՈԿ ԱՍՎԻ ԱՆՈՒՆԻՍ ԱՇԽԱՐՀԻՆ. ԱԶԿԱԻ
ԼՈՒՍԱԿՈՐԶԻՆ ՈՒՏԻԱԽՈՍ ՑԵՂԻՆ. ԶԳՈՂՆ Է ՏԱՊԱՆԱՔԱՐԻՍ
ՄԻՆԱՍ ԹՈՌՆ ՍՈՐԻՆ. ՎԱԽՃ 1877 ԱՄԻ 3 ՄԱՐՏԻ

Արձանագրութեան «ԱԶԿԱԻ ԼՈՒՍԱԿՈՐԶԻՆ ՈՒՏԻԱԽՈՍ ՑԵՂԻՆ»ը ցոյց է տալիս ամբողջի մասը։ Ընդ որում «ԱԶԿԱԻ»ը պատահական չէ․ դա «լուսաւորչական» էթնիկ ընկալումն է։ Որ ուղիներին յայտնի էր այդ բառի զուտ կրօնական իմաստը՝ կասկած չի յարուցում։ Բազմաթիւ են նաեւ զուտ դաւանանքային պատկանելութիւնն ընդգծող արձանագրութիւնները, ինչպէս՝

2. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՆԻՓ ԳԻՒՂԱՑԻ ՊԱՂՏԱՍԱՐ ՊՈՂՈՍ
ԵԱՆ ԴԱԼԼԱՔԵՆՑ ՏԱՊԱՆԱՔԱՐԻՍ ԶԳՈՂՆ ԷՐ ԻՐ
ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍԸ Ի ՀԱՅՈՑ ՏԱԻԱՆՈՒԹԵՆԵՆ ԼՈՒՍԱ
ԻՈՐԶԱԿԱՆ ՈՐՆ ՎԱԽՃԱՆԵԱԼ Է 1881 ԱՄԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15 ԻՆ



Նիփի Դավաբուռ թաղի գերեզմանոցի տապանաքար

«ՀԱՅՈՑ ՏԱԻԱՆՈՒԹԵՆՆԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ»ը հապէս տար-
բերուում է նախորդ արձանագրութեան «ԱԶԿԱՎ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ
ՈՒՏԻԱԽՈՍ ՑԵՂԻՆ»ից: Երկրորդ արձանագրութիւնն ուղղակիօրէն
մատնանշում է դաւանական պատկանելութիւնը:

Երեւոյթը կարելի է մասնաւորեցնել հետեւեալ կերպ. կայ հայոց
յուսաւորչական դաւանանք. դա միաւորի կրօնական ընկալումն է:
Յաջորդ մակարդակն այն գիտակցութիւնն է, որ այդ դաւանանքին
պատկանում է «քշտոն» ամբողջութիւնը. դա միաւորի էթնիկ ընկա-
լումն է: Քշտոնը՝ «մենք ենք» եւ այդ «մենք»ի մէջ «ուղի»ն կամ «նէոյ-
շի»ն մի մասն է: Եթէ որեւէ այլ էթնիկ միաւոր հետեւի յուսաւորչա-
կան դաւանանքին, նա, ճիշդ է, կը լինի «հայադաւան», բայց «քշտոն»
չի լինի: «Քշտոն» միաւորի միւս, աւելի մեծ խումբը հայերն են: Քշտո-
նի «ուղի» կամ «նէոյշի» եւ «հայեր» խմբերը միմեանցից տարբերում
են լեզուով:


Այս կառուցուածքը ակնառու է ուղիներին ներկայացնելու Արա-
խանեանցի այս յօդուածի սկզբում կատարուած մէջբերումից²⁷: Այս
երեւոյթն արտացոլուած է նաեւ տապանաքարային արձանագրու-
թիւններում: Օրինակ, Նիփի Դարամահլի գերեզմանոցի տապանագրե-
րից մէկը հաղորդում է.

3. ԱՍՏ ԱՄՓՈՓԵԱԼ Ի ՇԻՐՄԻ ՀԱՆԳՉԻ ՄԱՐՄԻՆ ՄԱՀՏԵՍԻ ԱԻԱՆԻՍ
ՆԻԺԵՑԻՈՑ ՊՈՂՈՍԵԱՆ ԴԱԼԼԱՔԵԱՆՑ ՈՒՏԻԱԽՈՍ ՑԵՂԻՍ
ԾԱՌԱՅ ՔՍԻ ՀԱՅ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՐՏԵՆ ՏԱԻԱՆՈՂԻՍ ՎԽՃԼ
ՍՊԱՍԵՍ ԹԱՐՈՒԹԻԱՆ ԿՈԶՈՂ ՄԱՀՎԱՆ ՀՐԵՇՏԱԿԻՍ
ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂՔ ՏԱՊԱՆԻՍ ԹԻՇԵՍՁԻՔ ԶՈՂՈՐՄԻՍ 18[?]4 02 ԱՄԻ

Նիփի Ս. Աստուածածին եկեղեցու բակում.

4. ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ՎԱՂԱԹԱՌԱՄ ՄԱՐՄԻՆ
ԾԱԶԳԵ ՈՒՏԻԱԽՈՍ ԳԱԼՈՒՍՏ ՈՐՍԿԱՆԻՆ
ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ՇԻՐՎԱՆԵԱՆՑ ՏՐ ՄԵԼՔՈՒՄԻՆ
ՀԱՆԴԻՊՈՂՔՆ ՆՄԱ ԱԾ ՈՂՈՐՄԻ ԱՍԱՍՑԻՆ
ՎԱԽՃԱՆԵԱԼ 1877 Ք ԱՊՐԻԼԻ 25 ԻՆ
ՈՐՊԵՍ ԾԱՂԻԿ 25 ԱՄԵԱՑ ՀԱՍԱԿԻՆ

5. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՐԿՈՍ ԱՂԱՋԱՆԵԱՆԻՍ
ԻՇԽԱՆ ՆԻԺԵՑԻՈՑ ՈՒՏԻԱԽՈՍ ՑԵՂԻՍ
ԱԶԳԱԻ ՀԱՅ ԴԱԻԱՆՈՂ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՍ
ԳԹԱՑ ԶԻՍ ՏՐ ՍՏԵՂԶՈՂ ԱՄԵՆԻՍ



Նիփի Դարամանլի թաղի գերեզմանոցի տապանաքար

Արձանագրութիւնների բերուած օրինակներից առաջինում եւ հինգերորդում՝ ազկաւ լուսավորչին եւ ազգաւ հայ դաւանող լուսաւորչիս, ուտիախօս ցեղին եւ ուտիախօս ցեղիս, չորրորդում՝ յազգէ ուտիախօս արտայայտութիւններն ակնյայտօրէն վկայում են, որ նախ՝ «յազգէ» տերմինը հաւասարազօր պիտի լինէր ինչպէս դաւանութեան, այնպէս էլ «ուտի» էթնիկ տերմինի իմաստի ընկալման շրջանակներում: Երկրորդ, եւ տուեալ դէպքում ըստ իս շատ կարեւոր, նեղ էթնիկ միաւորը (ցեղը, ազգը) մատնանշուած է լեզուական պատկանելութեան առումով՝ «ուտիախօս»: Հակադրութիւնը դաւանական ամբողջութեան (ուղիական ընկալմամբ՝ «քչտոն» էթնիկ ամբողջութեան) շրջանակներում բացառապէս լեզուական մակարդակի է, այսինքն՝ կան հայեր ընդհանրապէս (նոյնն է՝ կան «քչտոններ» ընդհանրապէս), որոնց մի մասը, ճիշդ է՝ փոքր մասը, «ուտիախօսներն» են, իսկ միւս, աւելի մեծ մասը՝ «հայախօսները» (հմմտ.՝ «գիւղը կազմուած է հայերից, որոնք գլխաւորապէս ուղիներէն են խօսում»):

Անշուշտ, «ուտի» տերմինը գործածական էր նաեւ առանց լեզուական կամ դաւանական պատկանելութեան ընդգծման: Նիժի Ղոժարայի թաղի եկեղեցու բակի տապանաքարերից մէկում կարդում ենք.

6. Ի ԾԱՅՍ ՏԱՊԱՆ ԿԱՅ Ի ԹԱԳՈՒՍ
 ԻՇԽԱՆՆ ՈՒՏԻԱՆՈՒՆ ԳԱԼՈՒՍ
 ՈՐ Ի [Է?] ՇԻՆՈՂ ԵԿԵՂԵՑԻՈՑՍ
 ԱՍՏ ՓՈՒԵԾԱՒ ԱՌ ՏՐ ԾՍ
 ՍԱ Է ՈՐԴԻ ՊԵՏՐՈՍ ԴՊՐԻՆ
 ԱՐԵԱՄԲ ՆԵՐԿԵԱԼ ՆԱՀԱՏԱԿԻՆ
 ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ԱՅՍՄ ՇԻՐՄԻ ԱՍԷՔ ԱՄԱ ՏՐԸ
 ՈՂՈՐՄԻ 1872

Նոյն եկեղեցու մուտքից ձախ փորագրուած է դրա շինարարութեանը դրամ յատկացուցած Խաչատուր Եղիազարեանին նուիրուած արձանագրութիւնը.

7. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
 ԽԱԶԱՏՈՒՐ
 ԻՇԽԱՆՆ ՈՒՏԻ
 ՅԵՐԿԱՆ ՅԻՒՐ
 Ի ՇԻՆՈՒԹԻՆ
 ՏԱՃԱՐԻՍ
 ԵՏ ՀԻՆԳՀԱՐԻՒՐ
 ՌՈՒԲԼԻՍ

Գիւղի Դարամահա թաղի գերեզմանոցի տապանաքարերից մէկի վրայ էլ փորագրուած է.

8. ԱՅՍՄ ՏԱՊԱՆԻ ԱՆՓՈՓԵԱԼ ԴՆԻ ՄԱՐՄԻՆ

ՈՒՏԻԱԶՆ ՍԱՆՏՈՒԹՅՈՒՆ ԵՆԿԻՐԱՐԵԱՆՑ ԵՒ ՈՐԷ

ԿԻՆ ՊՕՂՕՍԻ ՔԱՐԱՄԵԱՆՑԻ ԴԱԼԼԱՔԵԱՆՑ

ՈՎ ՈՐ ՀԱՆԴԻՐԻ ԱՄ ՈՂՈՐՄԵԱ ՅԻՇԻ Վ Ք 18 1/01 96

Ուշագրաւ են տերմինների ընկալման բոլոր մակարդակները: Բնական է, որ «ուտի» տերմինի նախնական, ցեղանուանում արտայայտող իմաստը պիտի դրսևորուէր: Սակայն կարելոր է ուշադրութիւն դարձնել քաղաքական, մշակութային, էթնիկ պատմութեան ընթացքում եզրի ստացած երանգային ընկալումներին: Ի դէպ, թիւ 8 արձանագրութեան մէջ յիշատակուող Գալուստ անունով «ուտի իշխան»ի վերաբերեալ Արարատի 1869ի հաղորդումներից մէկում, ուր խօսքը վերաբերում է «Նուխոյ» գաւառի ...տեղական հարստահարեալ խղճայի Հայ ժողովրդոց» մասին, գրուած է. «Նուխոյ գաւառի մէջ, Նիփ ասացեալ գիւղում Ուտիարարբառ ազգասէր Գալուստ Իւզբաշին իւր հայրենի հետոց ընթացակից լինելով, ցոյց տուաւ նորերումս իւր ջերմեանդութեան գովելի պտուղը, կանգնելով իւր սեպհականութիւնից մի գմբեթաձեւ փառաւոր կոփածոյ քարամբք եկեղեցի»²⁸: Այստեղ եւս վերը յիշուած երեւոյթի դրսևորումն է՝ Հայ ժողովրդի «ուտիարարբառ» գաւառներից մէկը:

Ակնյայտ է, որ ուղիերէն խօսելու երեւոյթը ուղիների ուղիական էթնօպատկանելութեան ուղղակի վկայութիւնն էր: Եթէ հայերէնը համատարած գործածական լեզու լինէր ուղիների միջավայրում, այս երեւոյթն, անշուշտ, չէր լինի: Որ թրքախօսութեան շանցած ուղիների կենցաղային լեզուն շարունակում էր մնալ ուղիերէնը, ի թիւս վերոյիշեալ վկայութիւնների, կարելի է բերել եւս մէկը: 1869ին Արարատի թղթակիցներից մէկը յայտնում է. «քաջածանօթ է ամեն ընթերցասիրաց՝ թէ Նուխի՝ որքան գաւառներու է բաժանուում, այնքան տարբեր խօսակցութեան. եւ գլխաւորապէս իբրեւ մի նշանաւոր՝ ամեն լեզուներէ որոշ, եւ սակաւուց ծանօթ Ուտիական ասացեալ բարբառը՝ որ եւ երկու կամ երեք գիւղ սովորաբար իրանց մէջ այդ լեզուն են գործածում, եւ ինչպէս մի սրբազան նշխար հնութեան անկորուստ պահած են մինչեւ ցայսօր, նոյն լեզուաւ դաստիարակելով իրանց որդիքը»²⁹: Ուշագրաւ է, որ Յովսէփեանի բազմիցս յիշատակուած «ուտիախօս եւ թրքախօս գիւղեր», «ուտիախօս-հայադաւան», «Նիփի ուտիախօս բնակիչներ», «թրքախօս հայադաւան», «ուտիացոց աշխարհի թրքախօս եւ ուտիախօս հայեր» լեզուական բնորոշումների կողքին ո՛չ մի անգամ չի հանդիպում «հայախօս ուտիներ» արտայայտութիւնը: Մօտ հարիւր

էջանոց աշխատանքում միայն երկու տեղ՝ էջ 34 եւ 38ում հանդիպում է «հայաստ» բառը: Էջ 38ում այն կիրառւում է «սարեցի», «եկուոր»՝ իրապէս հայկական էթնիկ միաւորի վերաբերմամբ՝ հակադրելու «ուտիասո հայերին»: Միւս դէպքին կ'անդրադառնանք ստորեւ:

Իսկապէս, ունենք բազում վկայութիւններ, որ ԺԹ. դ. եւ նոյնիսկ Ի. դ. սկզբին դպրոցական կրթութիւն չստացած ուղիները հայերէն ամենեւին չեն իմացել: Նիժի հայկական դպրոցում երկու տարի սովորած առաջին ուղի կինը, որի հայրը նոյն դպրոցի ուսուցիչն էր, գրում է. «Առաջին տարում գրագիտութիւն չէին սովորեցնում, այլ միայն հայերէն խօսել էին սովորեցնում, որովհետեւ երեխաները դպրոց գնալիս հայերէն չէին իմանում, իսկ երկրորդ տարուայ սկզբին սկսում էին գրագիտութիւն սովորեցնել հայերէն, բայց որովհետեւ երեխաները տանը ոչ մի խօսք հայերէն չէին լսում, դպրոցում սովորածն էլ յաճախ մոռանում էին»³⁰: 1880ականներին Նիժում որպէս ուսուցիչ աշխատած Սարգիս Քամալեանի վկայութեամբ նոյնպէս գիւղում հայերէն շատ քչերը գիտէին:

Նրա համար որպէս թարգմանիչ հանդէս էր գալիս դպրոցի հոգաբարձուներից մէկը՝ Ճոտանանց նշանաւոր տոհմից Թոմա Եուզրաշին՝ «գրագէտ, լաւ հայաստ»³¹: Սակայն այս տոհմը Նիժի առաւել աչքի ընկած գերդաստաններից էր: Ենգիրար Ճոտանեանի միջոցներով էր կառուցուել Դարամահլա թաղի Սրբ. Եղիշէի եկեղեցին, որ Նիժում յայտնի է Ջոտարիքիլիսա՝ Ճոտանեանների եկեղեցի անուամբ, որի բակում էլ գտնւում է Ենգիրարի տապանաքարն՝ արձանագրութեամբ: 1867ին այս տոհմից սերող Սաչատուր Ճոտանեանցը՝ չորս այլ պատանիների հետ, մեկնում է Էջմիածին, որպէսզի «սովորի մայրենի հայերէն լեզուն եւ վերադառնալով՝ քահանայ լինի»³²: Այս ընտանիքի գրագիտութիւնը եւ հայերէնի իմացութիւնն աւելի բացառութիւններն էր, քան թէ օրինաչափութեան վկայութիւն է:

Նիժի ծխական դպրոցը սկսել է գործել 1865ին, որ հաւաստւում է 1870ին Արարատի մի հաղորդմամբ³³: Չնայած Նուխու փոխանորդ Արիստակէս վարդապետը յայտնում է, որ աշակերտները բաւական առաջադիմել են, ուսանում են ընթերցանութիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն, երգեցողութիւն եւ կրօնագիտութիւն³⁴ եւ չնայած դպրոցում գրագիտութիւն ստացած շատ տղաներ «գնացին իրենց ուսումը շարունակելու զանազան քաղաքներում՝ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, Շուշու թեմական դպրոցում, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում եւ զանազան գիմնազիաներում»³⁵, այնուամենայնիւ հայերէնը գիւղի մասշտաբով այնքան չտարածուեց, որ Ի. դ. սկզբին Նիժում ուսուցիչ աշխատած Ս. Իսրայէլեանն իր աշակերտների ծնողների հետ ստիպուած էր ադրբեջաներէն խօսել: Բնականաբար հայերէն

ամենեւին չգիտէին Ժ. Դ. դեռեւս թէպէտ հայադաւան, բայց վաղուց թրքախօս ուղիական գիւղերում:

Վիճակը փոքր ինչ այլ էր համեմատաբար քաղաքակիրթ ու բազմազգ Վարդաշէնում, ուր ապրում էին նաեւ բաւականաչափ հայեր: Վարդաշէնցի վրացադաւան ուղի Մ. Բեժանովը վկայում է, որ գիւղաքաղաքի բնակչութիւնը բաղկացած էր ուղղադաւան եւ լուսաւորչական ուղիներից, հայերից, թաթարներից եւ հրեաներից: «Ուղղադաւան եւ լուսաւորչական ուղիներն իրար հետ խօսում են ուղիներէն», - աւելացնում է հեղինակը³⁶: 1880ից Վարդաշէնում եղել են ուսումնարան ու ծխական հայկական դպրոց՝ ուղիների եւ հայերի համար:

Բոլոր պայմաններն առկայ էին Վարդաշէնում ուղիների բազմալեզուութեան համար: Կային հարեւանութեամբ ապրող հայեր, կար հայկական դպրոց, եկեղեցի, ուր ժամերգութեան լեզուն հայերէնն էր, եւ Վարդաշէնի ուղիների մէջ սկսեց տարածուել հայերէնը: Կային հարեւանութեամբ ապրող «թաթարներ»: Թաթարերէնը շրջատարածքի հիմնական հաղորդակցութեան լեզուն էր, եւ Վարդաշէնի ուղիների մէջ սկսեց տարածուել նաեւ այդ լեզուն:

Ի. Դ. սկզբի Վարդաշէնի լեզուական վիճակը փայլուն է բնութագրել Ա. Դիրը: «Վարդաշէնում հանդիպում են նաեւ (ուղիներից բացի - Հ. Խ.) հայեր, թաթարներ, պարսկական հրեաներ եւ միքանի լեզգիներ: Բնակչութեան այդ բազմազանութիւնը խիստ դժուարացնում է ուղիներէնի ուսումնասիրութիւնը: Վարդաշէնի գրեթէ բոլոր ուղիները իրենց մայրենի լեզուից զատ, ազատ խօսում են կամ թաթարերէն, կամ պարսկերէն, կամ հայերէն: Յաճախ նրանք նոյնիսկ տիրապետում են միքանի լեզուի: Այստեղից էլ ըխում է այն հանգամանքը, որ ուղիների լեզուն ամբողջովին համեմուած է թաթարերէն, հայերէն ու պարսկերէն բառերով ու լեզուական դարձուածներով ... Ուղի երեխաները, որոնք սովորում են խօսել երկու կամ երեք լեզուներով միաժամանակ, տարբեր բարբառներն աւելի շատ են խառնում իրենց լեզուում, քան տարեցները»³⁷:

Վարդաշէնում հայերէնի տարածուածութիւնը Ի. Դ. սկզբին վկայում է եւ Յովսէփեանը: «Վարդաշէնում հարիւրաւոր հայախօս եւ հայ գրաճանաչ հայեր (ուղիներ - Հ. Խ.) կան այժմս»³⁸: (Ի դէպ, սա Յովսէփեանի կողմից «հայախօս» բառի երկրորդ գործածութիւնն է): Սակայն այս առանձնայատուկ վիճակը բնորոշ էր միայն Վարդաշէնին, թէեւ այս դէպքում եւս չի կարելի խօսել զուտ հայերէնի ազդեցութեան մասին:

Իսկ ընդհանուր առմամբ Նուխու եւ Ղարալայի ուղիական միջավայրում հայերէնը տարածուած չէր: Այն երբեւէ լայն տարածում չի էլ ունեցել եւ միայն Ժ. Դ. երկրորդ կէսից յետոյ է որոշ դեր խաղացել

Նիժ եւ Վարդաշէն ուղիական բնակավայրերում: Ակնյայտ է, որ ուղիական էթնօսի գլխաւոր էթնօպահպան գործառոյթն իրականացնում էր ուղիներէնը: Այնտեղ, ուր թուրքերէնը դարձաւ հիմնական լեզու, նոյնիսկ քրիստոնեայ լինելու գիտակցութիւնն ակտիւ էթնօպատկանելութեան դեր չխաղաց: Անկասկած սխալ է Վ. Ղուկասեանի այն պնդումը թէ «ուղիները եռալեզու են դարձել, ամենայն հաւանականութեամբ, Ժ.-ԺԱ. դդ. ոչ ուշ: Որոշ աղբիւրներից դատելով, նրանք դեռեւս ԺԾ.-ԺԶ. դդ. ազատօրէն տիրապետել են հայերէնին եւ աղբրեջաներէնին»³⁹: Հեղինակը չի յիշատակում որեւէ աղբիւր, սակայն եթէ ենթադրենք, որ նրա համար որպէս միակ աղբիւր ծառայել է հենց ինքը՝ լեզուն, ապա այդ դէպքում եւս Ղուկասեանի բերած նիւթերն այդպիսի յատարարութեան հիմք չեն տալիս: Նա նշում է, որ հայերէնից ուղիներէնին են անցել որոշ պաշտամունքային եզրեր (սուրբ, տէր-տէր, եկեղեցի), ինչը միանգամայն բնական է, քանզի հայերէնը նրանց պաշտամունքի եւ ժամերգութեան լեզուն էր դարերից ի վեր: Բառերի միւս խումբը, որ բերում է Ղուկասեանը, ընդհանրապէս միայն վերջին հարիւրամեակում կարող էր անցնել ուղիներէնին եւ կապուած է ուղիների մէջ հայկական դպրոց բացելու հետ: Դրանք են՝ դասարան, վարժապետ, ուշանոց (ուսուցչանոց), սեղան, գիրք, տետրակ, գրչակոթ, թանաք, տող, քառակուսի (տետր), եւլն: Այս բառերի մի լեզուից միւսին անցնելու համար ամէնեւին էլ պարտադիր չէր, որ մատակարար լեզուն կենցաղային կիրառութիւն ունենար: Աւելին՝ կարելի է շարունակել Ղուկասեանի թուարկած բառերի շարքը, օրինակ՝ տօնանունները, սակայն դրանք հիմնականում պաշտօնական յարաբերութիւնների ոլորտն են ընդգրկում եւ ո՛չ՝ լեզուական հիմնական բառապաշարը: Նիւթերն աներկբայ վկայում են, որ չնայած հայադաւան լինելուն եւ դրանով իսկ «հայեր» անուանուելուն, Նուխու եւ Ղաբալայի ուղիները հայերէն սկսել են խօսել միայն դպրոցական կրթութիւն ստանալու շնորհիւ, եւ այն էլ՝ սոսկ այդպիսի կրթութիւն ունեցողները:

Ռուսական ցար Պետրոս Ա. Մեծին (գահակալել է 1682-1725ին) լողւած ուղիների խնդրագիրը Ղուկասեանը համարում է սահմանը, որտեղ աւարտւում է հայոց լեզուի ազդեցութիւնն ուղիների վրայ: Յօդւածի այդ հատուածը հնչում է այսպէս: Պետրոս Ա.ին ուղղուած հայերէն նամակը ստորագրել է Ղաբալայի ուղիական վեց գիւղի ներկայացուցիչ՝ «սակայն այժմ այդ չըջանում ուղիներէնը պահպանուել է միայն Նիժ եւ մասամբ Զօոււլու գիւղերում: Մնացած գիւղերում ԺԸ. դ. սկսած հայերէնի ազդեցութիւն չի դիտւում: Այստեղ եղել է միայն երկլեզուութիւն՝ ուղիներէն եւ աղբրեջաներէն»⁴⁰: Այսինքն՝ եթէ ուղիներէնը պահպանուել է միայն Նիժում եւ մասամբ Զօոււլուում, ուրեմն

հայերէնի ազդեցութիւն չի եղել: Հեղինակի տրամաբանութեամբ հայերէնի ազդեցութեան պայմաններում ուղիներէնը պիտի պահպանուէր, եւ եթէ այն չի պահպանուել, ապա միայն հայերէնի ազդեցութեան դարեցման պատճառով:

Ճիշդ չէ նաեւ Պետրոս Ա.ին հայերէնով գրուած նամակի հիմամբ հայերէնի ազդեցութիւնը նոյնիսկ ժ.Ը. դ. սկզբին աւարտուելու կըրուանը: Պաշտօնական գրագրութեան լեզուն ինքնին չի վկայում այդ լեզուի գործառական լայն շրջանակների մասին:

Նուխու եւ Ղարալայի գաւառների ուղի բնակչութեան մինչեւ ժ.Թ. դ. երկրորդ կէսը ոչ-հայախօս լինելու հանգամանքը վճռորոշ դեր է խաղացել ուղիների էթնօպահպանութեան խնդրում եւ, ըստ էութեան, հանդիսացել է այն գլխաւոր գործօնը, որ այսպէս կոչուած «հայ ուղիները»՝ «քշտոն»ների մի հատուածը, չի ձուլուել միւս, աւելի մեծ «քշտոն»ների (քրիստոնեաների)՝ հայկական հատուածի մէջ: Հայադաւան ուղիներն իրենց չեն հակադրել հայերին, արտաքին աշխարհին ներկայացել են որպէս ուղիախօս հայեր, որպէս՝ ամբողջի մաս, իսկ երբեմն էլ, նայած հանգամանքին, պարզապէս՝ հայեր: Այդպէս էր, օրինակ, Պետրոս Ա. Մեծին ուղղուած դիմումի մէջ. «Ղապալու երկրորդս հայոց ...գիշերն հայութիւն ենք անում»: Սակայն այս դէպքում ուղիների հայեր կոչուելու մղումը միանգամայն այլ հող պիտի ունենար: 1724ին ռուս արքան յայտարարել էր հայերին հովանաւորելու իր մտադրութեան մասին, եւ հայերի ճակատագիրը բաժանող ուղիները՝ որպէս հայ ներկայանալով, այդ հովանաւորութիւնից օգտուելու ամէնամօտ չէր եւ ուղիի ճանապարհն էին ընտրել՝ մանաւանդ, որ նրանք ունէին այդպիսի բարոյական իրաւունք: Այնպէս որ այս նամակը ոչ մի կերպ չի վկայում «հայերի մէջ ուղիների ինտենսիւ ձուլման» մասին, ինչպէս կարծում է Ա. Արզումանեանը⁴¹:

Նիւթերը ցոյց են տալիս, որ «վրացի» անունն այն կրող ուղիների խմբի համար սոսկ արտացոլանուն է: Վրաց դաւանանքին հետեւող ուղիներն իրենք իրենց «վրացի» են կոչել միայն ուղիական միջավայրում, չնայած նրանք այդպէս են յաճախ յորջորջուել նաեւ հայադաւան ուղիների կողմից: Արտաքին միջավայրում նրանք իրենց կոչել են «ուղի» կամ «նէոյլի»: Վրաց էթնիկ միջավայրի բացակայութիւնը խանգարել է վրացական մշակութային տարրերի տարածմանը, եւ մերձեցումը դիտուում է միայն քրիստոնէական ծէսի շրջանակներում եւ որոշ անձնանունների տարածման մակարդակով (ինչպէս՝ Իսիդոր, Անդրէ, Գէորգի, Իւանէ, Վասիլ, եւլն.): Տապանաքարային արձանագրութիւններում «վրացի» ցեղանուն (էթնօնիմի) առկայութիւնը յաջողուեց գտնել միայն երեք տեղ, սակայն նոյն ընտանիքի շրջանակներում՝ Չոլախովների գերդաստանային խմբում:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՐԴԱՇԻՆՑԻ ԿԵՕՐԿԻ
ԶՕԼԱԽՈՎԻՆ ԵՂԲՈՐ ՈՐԴԻ ՎՐԱՑԻ ՏՐ
ԱՆԴՐԷՅԻՆ 1857 ԻՆ ՄԱՐՏԻ 1 ԻՆ

Տապանաքարի հակառակ կողմը արձանագրութիւն չկայ: Միւս տապանաքարը նոյն տէր Անդրէի որդունն է:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՐԴԱՇԻՆՑԻ ՎՐԱՑԻ ՎԱՍԻԼԻՆ
ՄԻԱՄՕՐ ՈՐԴԻ ԶՕԼԱԽՈՎ ՏՐ ԱՆԴՐԷՅԻՆ
Ի ՅՆՆ ԱՄԱՑ ՀԱՆԳԵԱԻ Ի ՏՐՆ
Ի Յ ՅՈՒԼԻՍԻ 1858 ԱՄԻՆ ՈՎ ՀԱՆԴԻՊ
ՕՂՔ ՍՈՅՆ ԴԱՊԱՆԻ ՄԻԱԲԵՐԱՆ ԴՈՒՔ ՈՂՈՐ ՄԻ

Տապանաքարի հակառակ երեսին դարձեալ արձանագրութիւն չկայ:

Վերջապէս երրորդը հենց Տէր Անդրէի գերեզմանաքարն է:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՎԱՐԹԱՇԻՆՑԻ ՎՐԱՑԻ ԱՆԴՐԻՔԱ
ՀԱՆԱՅ ԶՕԼԱԽՈՎԻՆ ԶԵՌՆԴՐԵՑԱԻ ՍԱ 1845 ԱՄԻՆ
ՎԱՆՃԱՆԵՑԱԻ Յ1 ԻՆ ՄԱՐՏԻ 3 ԻՆ ՈՎ ՀԱՆԴԻՊՈՂՔ
ՍՈՅՆ ՏԱՊԱՆԻ ՄԻԱԲԵՐԱՆ ՏՈՒՔ ՈՂՈՐ ՄԻ

Որոշակի է, որ այս Չոլախովն ուղի է: 1852ին Վրաստանի էկզարխ Իսիդորը յանձնարարել է «Վարդաշէնցի քահանայի Չելոկաեւին, ուղի, կազմել ուղիներէնի բառարան»⁶²: Իսկ որ Չելոկաեւը նոյն Անդրէ քահանայ Չոլախովն է, հաստատոււմ է նրա տապանաքարի մօտ գրտնուող իր կնոջ տապանաքարի արձանագրութեամբ:

Zdes pogrebena zhena sviashchen, Andreia
Cholakaeva Mapiia skunchavshaiasaia 15ogo
Avg. 1873 goda vechnaia pamiat.

(Այստեղ թաղուած է կինը քահանայ Անդրէ Չոլաքաեւի՝ Մարիան վախճանեալ 15 Օգոստոս 1873 թուական յաւերժական յիշատակ)

Ինչ վերաբերում է արձանագրութեան մէջ «վրացի» բառի առկայութեանը, ապա դա թերեւս պայմանաւորուած էր Անդրէի ուղղափառ քահանայ լինելու հանգամանքով՝ առաւել եւս, որ բերուած տեքստերից առաջինում «վրացի» բառը դրւում է միայն Անդրէի (թաղուածի հօրեղբոր) վրայ՝ «եղբոր որդի վրացի տր Անդրէին»:

Վարդաշէնի գերեզմանոցի բոլոր երեք տապանաքարային արձանագրութիւններն առհասարակ էթնիկ կամ դաւանանքային պատկանելութեան մասին տեղեկութիւն չեն պարունակում, միայն թէ վրացադաւան ուղիների տապանաքարերին երբեմն հայերէն տեքստին զուգահեռ փորագրուում է նաեւ ռուսատառ տեքստ, ինչպէս:

մի կողմում՝
Այս տապանի տակ
Հանգչում է Շախ-
սանամ Սիլիկեան
կին Բարա Բեկ
Սիլիկեանցի վրձն
20ն ապրիլի 1864 թ.

միւս կողմում (ռուսերէն)՝
Zdes pogrebena
Shakhsanam
Silikova supr
uga Baba Bega
umersh. 20 apreliia
1864 goda

Վարդաշէնի ինչպէս վրացադաւան, այնպէս էլ հայադաւան ուղի-
ների տապանաքարերին «ագգ» տերմինը կիրառուում է միայն տոհմի,
գերդաստանի առումով: Օրինակ՝ վրացադաւան Սլղրեանների տոհ-
մական տապանաքարերից մէկի արձանագրութիւնը.

ՔԱՀԱՆԱՅԻ Է ԱՅՍ ՏԱՊԱՆ ՏԷՐ ՀԱՐ
ՈՒԹԻՒՆ ԱԶԳ ՍԼՂՐԵԱՆ ՈՐԴԻՆ ՍԱ
ՀԱԿ ՔԱՐՍ ԿԱՆԳՆԵԱՅ ՊԱՀԵՍՅԷ
ՏԷՐ ԶԱՅՆ ՈՐ ՅԻՇԵԱՅ 1868 ԱՄԻ

«Ագգը» նոյն իմաստով է օգտագործուած նաեւ լուսաւորչական Ա-
ռստամեանների տապանաքարերին, օրինակ՝ Զարավար (Վարդա՞ն)
կոչուող գերեզմանոցում.

ՅԱՆԿԵԱԻ ԲԱԼԱՆԱՆՈՒՄ ԿՆՕԶ
ՍԱՐԳՍԻ ԱԶԳԷՆ ԱՐՍՏԱՄԵԱՆՅ
ԳԻԻՂ ՎԱՐԴԱՇԷՆԻ ԱՄՓՈՓԵ
ԱԼ ՏԵՒ ՍՈՅՆ ԱՅՍ ՏԱՊԱՆԻ ՁՆ
ԵԱԼ 1818 ԱՄԻ ՎԱԽՃԱՆԸ 1860 ԱՄԻ

Վարդաշէնի վրացադաւան ուղիները վրացերէն երբեք չեն իմացել:
Նրանց խօսակցական առօրեայ լեզուն եղել է ուղիերէնը, սակայն վեր-
ջին հարիւրամեակում բաւականաչափ տիրապետել են նաեւ հայերէ-
նին եւ աղբբեջաներէնին: 1896ին Վարդաշէնում բացուել է ռուսական
դպրոց եւ ուղիների այս խմբի երեխաների կրթութիւնը իրականաց-
ւել է ռուսերէնի միջոցով:

Այսպիսով, Վարդաշէնի վրացադաւան ուղիներն իրենց դաւանա-
կան պատկանելութեան շրջանակներում գիտակցել են իրենց ինքնու-
թիւնը, սակայն որպէս խումբ երբեք չեն հակադրուել ուղիական ընդ-
հանուր էթնիկ ամբողջութեանը, կենցաղա-մշակութային տարբերու-
թիւններ չեն ունեցել, էթնիկ ինքնագիտակցութեամբ մնացել են ուղի-
ներ: Նուխու գաւառի շրջանակներում վրացադաւան ուղիների «գիւր-
ջի» յորջորջուելու սոսկական փաստով նրանց վրաց էթնիկ միաւորի
մէջ ձուլուած համարելու Արզումանեանի միտքը որեւէ հիմք չունի:

պարզապէս հապճեպ եզրակացութիւն է⁴³: «Գիւրջի», «վրացի» անուանումներն անկասկած օգտագործուում էին հայադաւան ուղիներին հակադրելու նպատակով: Յետագայ շրջանի պատմութիւնը հաստատում է այս միտքը:

1918-1920ի ազգամիջեան բախումների ժամանակ, ի թիւս այլ քրիստոնեաների, տուժեց նաեւ ուղիների վրացադաւան հատուածը: 1922ին ուղի Ջինորի Սիլիկիչիլիու նախաձեռնութեամբ նրանց մի մասը տեղափոխուեց Վրաստան եւ հիմնեց նրա անունը կրող Ջինորեանի ուղիական գիւղը⁴⁴: 1938ին գիւղը վերանուանվեց Օկտոբերի: 1970ի մարդահամարի տուեալներով, այս գիւղն ունէր 5,5 հազար բնակիչ: 1975ին այստեղ աշխատել են մի խումբ ազգագրագէտներ, որոնց հաղորդման համաձայն ուղիները Վրաստանում շարունակուում են պահպանել իրենց էթնիկ ինքնագիտակցութիւնը (ինքնանուանումն՝ «ուղի»), լեզուն - որը գիւղի մակարդակով օգտագործուող եւ ընտանեկան կենցաղային լեզուն է - ինչպէս նաեւ կենցաղա-մշակութային բազում ուղիական առանձնայատկութիւններ⁴⁵: Վրաստանում ապրող ուղիների վերաբերմամբ «գիւրջի», «վրացի» անուանումներն այլեւս դադարել են գործածուել: Դաւանակիցների միջավայրում վերացել է դաւանանքն ընդգծելու անհրաժեշտութիւնը եւ առաջին պլան է մղուել էթնիկ պատկանելութիւնն ընդգծելու խնդիրը: Ուստի էթնիկապէս պահպանուելու համար մեծ նշանակութիւն է ստացել եւ այսօր էլ իրականացուում է «ուղի» կոչուելու եւ ուղիներէն խօսելու միտումը:

Բոլորովին այլ ճակատագիր ունեցան թրքախօս-հայադաւան եւ մահմեդականութիւն որդեգրած ուղիները:

Թրքախօս-հայադաւան ուղիական գիւղերից միջանիսում բնակչութիւնը միատարր չէր: Նրանց մի մասն արդէն մահմեդականացած էր, սակայն 1880ականներին այս գիւղերի մեծ մասում հայադաւան հատուածը դեռեւս մեծամասնութիւն էր կազմում: Այդպէս էր, օրինակ, Սուլթան-Նուխիում, ուր բնակչութեան 8/7ը՝ ըստ Արասխանեանցի, հայեր (ուղիներ - Հ.Ս.) էին⁴⁶, իսկ գիւղն ունէր 121 տուն՝ 1049 շնչով⁴⁷:

«Խառը կազմ ունեցող գիւղերից միայն երկուսում՝ Վարդանյուում եւ Փաղառում, հայերը փոքրամասնութիւնն են», վկայում է Արասխանեանցը⁴⁸: Նրա հաղորդման համաձայն, թրքախօս-հայադաւան գիւղերից միայն Զօռուլուում, Միրզաբէյլիում եւ Ենգիքենդում էին ապրում բացառապէս հայեր (ուղիներ)⁴⁹: Այս տուեալները հաստատում են նաեւ Բարխուդարեանի նիւթերով: Սուլթան-Նուխի բնակավայրի վերաբերմամբ նա գրում է. «բնակիչք բնիկ եւ թրքախօս», Զօռուլուի՝ «ժողովուրդն բնիկ եւ թրքախօս», Փաղառի՝ «բնակչաց ամենամեծ մասն մահմետական», Վարդանի գիւղ՝ «մեծ մասամբ՝ մահմե-

տական»։ Այս բոլոր գիւղերում մինչեւ Ի. դ. սկիզբը գործում էր եկեղեցի։ Թրքախօս, բայց դեռեւս չմահմեդականացած հատուածն ուղիների կողմից շարունակում էր ընկալուել որպէս մի էթնիկ ամբողջութիւն։ Յովսէփեանն ուղիների կենցաղի նկարագրութեան ընթացքում նրանց չի անջատում իրարից. նրա մօտ սովորական են «թրքախօս հայ կին», «ուտիախօս աշխարհի թրքախօս եւ ուտիախօս գիւղեր», «ուտիացոց աշխարհի թրքախօս եւ ուտիախօս հայեր» եւ համանման այլ արտայայտութիւնները։ Հեղինակը մասնաւորապէս ընդգծում է այդ ընդհանրութիւնը, երբ նկարագրում է «ուտիացոց աշխարհի թրքախօս եւ ուտիախօս հայերի մէջ մինչեւ ցարդ պահպանուած հնաւանդ սքանչելի «սովորութիւնները»՝ ժողովրդական տօնակատարութիւնները, ուխտագնացութիւնները, հաւատալիքները, ժողովրդական բժշկութիւնը, փոխօգնութեան ձեւերը, եւլն.։

Խառը կազմ ունեցող բնակավայրերը, սակայն, շատ շուտով կորցրին իրենց վերջին հայադաւան հատուածը եւ այդ գործում, անշուշտ, մեծ դեր ունէր թրքախօս լինելու հանգամանքը։ Ի. դ. սկզբին այս գիւղերն այլեւս ներկայանում են որպէս «թաթարական» բնակավայրեր։ Թուրքերէնի ընդհանրացման հետեւանքները մղում են ուղիների պահպանուած մնացորդներին արագօրէն կազմակերպելու հայախօսութեան տարածման գործը։ Նրանց առջեւ էր Նիժի եւ Վարդաշէնի օրինակը, ուր հայկական դպրոցների առկայութիւնը մեծ խթան էր ծառայել ուղիների էթնօպահպանութեան գործում։ Այդ բնագաւառում նախաձեռնութիւնն, անշուշտ, պատկանում էր դարձեալ Նիժին եւ Վարդաշէնին։ Ուղիների այս բնակավայրերը Ժ. Թ. դ. 90ականներին դիմում են էջմիածին՝ արդէն «օրիորդաց դպրոց» բացելու խնդրանքով եւ շուտով թոյլտուութիւն ստանում։ 1895ին Արարատում հրապարակուել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Խրիմեանի (գահակալել է 1893-1907ին) կոնդակը, որով «արտօնի բանալ գերկուս օրիորդական դպրոցս ի Նիժս եւ Վարդաշէն»։ Ուղի մտաւորականները լաւ էին հասկանում հայերէնի դերը, ուստի պատահական չէ, որ վարդաշէնցի գեներալ-մայոր Ստեփան Բէկ-Սիլիկեանը 1912ին դիմում է էջմիածնի Սինոդին՝ իր ծախսերով «Վարդաշէն գիւղի եկեղեցու գաւթում ծխական դպրոց շինելու մասին»։ Այս մասին գրւում է նոյն թուի Արարատում։ Նա թոյլտուութիւն է ստանում եւ մինչեւ 1916 իրականացնում իր մտադրութիւնը։ Նոյն թուին, Գէորգեան ճեմարանի վարչութիւնը յատուկ որոշում է ընդունում «ճեմարանի սաների շարքն ընդունելու վարդաշէնցի Մեխակ Մարտիրոսեանի փոքրահասակ որդուն, իբրեւ բացառութիւն՝ ի նկատի ունենալով ուտիացիներու շրջանում հայ լեզուն տարածելու սկզբունքը»⁸⁰։

Նիժի եւ Վարդաշէնի օրինակին շուտով հետեւում են թրքախօս-հայազաւան Միրզաբէյլու եւ Զօուլու գիւղերի բնակիչները: Դեռեւս 1867ին Ղարաբաղի թեմի առաջնորդ Զալալեան սրբազանի յանձնարարութեամբ այս գիւղերից ընտրել եւ ուղարկել էին «մի-մի սրամիտ, ձայնեղ եւ քաջառողջ հայ պատանիներ, որ գնան Ս. Էջմիածնի ժառանգաւորաց հոգեւոր դպրոց եւ սովորեն մայրենի հայերէն լեզուն եւ ապա վերադառնալով իրենց հայրենիք՝ քահանայ լինեն»: Զօուլու գիւղից գնացած պատանին հենց Ղազար քահանայ Յովսէփեանն էր, որ յետագայում սերունդներին ժառանգեց *Ակնարկներ ուտիացի եւ մահմեդական հայերի մասին* չափազանց կարեւոր աշխատանքը⁵¹:

1914ին Գէորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսը (գահակալել է 1911-1930ին) կոնդակ է հրապարակում Ղարաբաղի թեմի Սուլթան-Նուխի եւ Զօուլու գիւղերի եկեղեցու բակում ծխական դպրոց բացելու մասին: Նուխու վիճակի փոխանորդ Ահարոնեան վարդապետը այդ գործն իրականացնելու համար գործուղում է Իսրայէլեանին, որին յաջողում է հոգեբարձութեան ընտրութիւններ անցկացնել եւ ուսուցիչներ հրաւիրել գաւառի եօթ հայկական գիւղերում, այդ թւում՝ Սուլթան-Նուխի թրքախօս-ուղիական գիւղում: Սակայն շրջատարածքի քաղաքական, տնտեսական եւ մշակութային իրադրութիւնն այլեւս չէր կարող նպաստել այդ ձեռնարկման իրականացմանը: Շուտով, 1920ին Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումից յետոյ, թրքախօս ուղիներն անցան ադրբեջաներէնով դպրոցական կրթութիւն ստանալուն:

Սակայն հայալեզուութեան անցնելուն ուղղուած վերոյիշեալ ջանքերն ու ձեռնարկումներն ապարդիւն չանցան: Վերոյիշեալ թրքախօս բնակավայրերում որոշ չափով շարունակեց պահպանուել ուղիական էթնիկ ինքնագիտակցութիւնը: Միրզաբէյլի, Զօուլու եւ Սուլթան-Նուխի բնակավայրերը միակն էին թրքախօս դարձածների մէջ, որոնք գիտակցում էին իրենց ընդհանրութիւնն ուղիական էթնիկ ամբողջութեան հետ: 1962ին հրատարակուած *Կովկասի ժողովուրդները* ուսեւրէն ամփոփող աշխատանքում մասնաւորապէս, նշում է. «Մինչեւ հիմա Վարդաշէնի հարեան Միրզաբէյլի, Զօուլու, Սուլթան-Նուխի եւ այլ գիւղերում հանդիպում են երկլեզու ադրբեջանցի-ուղիներ»⁵²: Նոյն 1962ին հրատարակած յօդուածում, հնագէտ Ս. Կազիբեր Սուլթան-Նուխի, Զօուլու եւ Միրզաբէյլի գիւղերի վերաբերմամբ գրում է, որ դաւանանքով հայ լուսաւորչականներ են, խօսում են ադրբեջաներէն. ո՛չ մի խօսք էթնիկ պատկանելութեան մասին⁵³:

Մահմեդական ուղիները ԺԹ. դ. վերջերին այլեւս յայտնի էին որպէս «թաթարներ» կամ «մուսուլմաններ»: Այն տնտեսական արտօնութիւնները, որոնցից օգտուում էին այլէթնիկ ծագումով մահմեդական-

ները, կրօնափոխ ուղիներին մղում էին արագօրէն մօտենալ արտօն-
 եալ խաւին: Յովսեփեանը մեծ դառնութեամբ պատմում է, որ «Հայից
 դարձած թում գիւղի հարուստ եւ զօրաւոր թուրք բեկեր ... վերջին 30-
 35 տարուայ ընթացքում Հայ գիւղացիներին յատկացուած ահագին
 տարածութեամբ պետական հողերը խլեցին բռնութեամբ եւ գէնքի ու-
 ժով եւ ապա կամաց-կամաց իւրացրին ու սեփականացրին իրենց»⁵⁴ :
 Հեղինակին շատ է զարմացնում այն հանգամանքը, որ «ուտիացոց
 աշխարհի բուն պարսիկներն ու լեռնային մահմեդականներն այն աս-
 տիճան անհաշտ ու սխերիմ թշնամի չեն քրիստոնեաների հետ, որչափ
 որ Հայից դարձած թուրքերը»⁵⁵ : Նորաթուխ մահմեդականները, ան-
 շուշտ, չէին կարող իրենց տնտեսութիւնն ամրապնդել շրջատարածքի
 փաստական տէրերի հաշուին եւ կողոպտում էին իրենց հայրենակից-
 ներին ու նախկին դաւանակիցներին: Նման քաղաքականութեան իրա-
 գործման առաջին եւ անհրաժեշտ պայմանը պիտի լինէր արտօնեալ
 մահմեդականների գանգուածին ձուլուելը եւ ուղիների հետ իրենց եր-
 բեմնի ընդհանրութիւնը մերժելը: Այսպիսի կողմնորոշման հետեւանքն
 այն եղաւ, որ շուտով նրանք դադարեցին յիշուել որպէս ուղիներ: Ի-
 դարասկզբի բոլոր տեղեկատուներում որպէս ուղի յիշատակում է
 բացառապէս քրիստոնեայ (յուսաւորչական ու ուղղափառ) եւ ուտիա-
 խօս հատուածը, այն է՝ Նիփի ու Վարդաշէնի ուղիները⁵⁶, կամ էլ միայն
 քրիստոնեայ ուղիները, ինչպէս ռուսական Մեծ Հանրագիտարանի
 18րդ հատորի «Ուղիներ» յոդուածում, ուր ասում է. «փոքրաթիւ ու-
 ղիներ ապրում են Ելիզաւետպոլի նահանգում, ուղղափառ են կամ
 լուսաւորչական»⁵⁷ : Մահմեդական ուղիների մասին ո՛չ մի խօսք այդ-
 պիսիք չկան: Դրանք արդէն, պէտք է ենթադրել, «թաթարներ» են: Մի-
 այն Ֆ. Բրոկհաուզի եւ Ի. Եֆրոնի Հանրագիտարանի բաւականին ըն-
 դարձակ «Ուղիներ» յոդուածում է յիշատակում, որ «դեռ վերջերս
 ողջ Նուխու գաւառում կային ուղիներէն խօսող ծերունիներ: Այժմ
 ուղիներ մնացել են միայն Ելիզաւետպոլի նահանգի 2-3 գիւղերում,
 հայերի, թաթարների եւ հրեաների հետ խառը»⁵⁸ :

Այսպիսով, մահմեդականացած ուղիներն արագօրէն կորցրին ի-
 րենց էթնիկ ինքնագիտակցութիւնը եւ խառնուեցին շրջատարածքի
 «մուսուլման», «թաթար», «թուրք» անուանումներով յայտնի ձեւա-
 ւորուող միաւորին: Քանի որ վերջինս կազմաւորուած, ընդհանուր
 մշակութային աւանդոյթներ չունէր եւ բաղկացած էր տարբեր տնտե-
 սաձեւ վարող, տարբեր ծագում ունեցող, բնիկ եւ եկուոր տարրերից,
 նորաթուխ մահմեդական ուղիները մշակութային մերժուածութիւն
 ու խորթութիւն չպիտի գգային: Գլխաւորապէս դաւանական ու լեզ-
 ւական հիմքի վրայ ձեւաւորուող էթնիկ գոյացման համար, կազմա-
 ւորման տուեալ փուլում, էթնիկական մշակոյթի կարեւորագոյն

տարրը մասնագիտացված էր, որն էլ, ի դէպ, դարձաւ որոշ ժամանակ ներ- եւ արտացոլանուն (էնդո- եւ էքզոէթնոսիմ)՝ «մուսուլման»՝ ելնելով էթնիկ հանրութեան գլխաւոր բնութագրիչ յատկանիշի մակարդակի:

Ընդհանրացնելով այս բաժնում դիտարկուած գործընթացները, պարզուած է, որ Նուխի եւ Ղարալա գաւառների բնակչութիւնը տեղում յայտնի էր «հայ», «ուղի», «քչտոն», «նէոյլի», «գիւրջի», «թաթար», «թուրք» եւ այլ ցեղանուններով, ցեղանուան մակարդակի հասած՝ «հայ», «գիւրջի», «մուսուլման» դաւանանուններով, «թրքախօս», «ուղիախօս», «լեզգիախօս»՝ լեզուական կոնկրէտացումներով, «հայ-ուղի», «գիւրջի-ուղի», «թրքախօս-հայ», «հայ-մասնագիտական»՝ որակումներով:

Քննարկուող սահմաններում ընթացող էթնո-լեզուական եւ դաւանական գործընթացները, բնակչութեան խալտարդէտ կազմը, մշակութային տարբերութիւնները, էթնիկ պատկանելութեան «անորոշութիւնը» հարեւան ժողովուրդների համար առաջին պլան մղեցին աշխարհագրական անունը: Մինչեւ վերջերս էլ Ադրբեջանի Վարդաշէնի եւ Կուտկաշէնի շրջանների բնակչութիւնը հանրապետութեան եւ Դաղստանի սահմանակից շրջաններում յայտնի էին «ղարալացիներ» անւամբ՝ մի անուանում, որը Ղարալայի վարչական նշանակութիւնը կորցնելուց յետոյ ձեռք բերեց որոշ առումով էթնիկական իմաստ⁵⁰:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Տեղանուններն անփոփոխ պահպանուել էին մինչեւ 1990ականների սկիզբը:

² Ղազար քահանայ Յովսէփեան, *Ակնարկներ ուտօպի եւ մասնագիտական հայերի մասին*, Թիֆլիս, 1904, էջ 11-12:

³ Նոյն, էջ 64-65. նաեւ՝ Մակար եպս. Բարխուդարեան, *Աղուանից երկիր եւ դրացիք*, Երեւան, 1999, էջ 126:

⁴ Յովսէփեան, *Ակնարկներ*, էջ 18:

⁵ Նոյն, էջ 33:

⁶ Նոյն, էջ 15, 25, եւ յն.:

⁷ Նոյն, էջ 17:

⁸ Նոյն, էջ 21:

⁹ Նոյն, էջ 39:

¹⁰ Նոյն, էջ 47:

¹¹ Նոյն, էջ 90:

¹² A. N. Araskhantiants, "Ekonomicheskii bit gosudarstvennikh krestian nukhinskogo uezda, elisavetpolskoi gubernii" (*Կիլգաւետպոլի նահանգի Նուխու գաւառի պետական գիւղացիների տնտեսական կենցաղը*), *Materiali dlia izucheniia ekonomicheskogo bita gos. krestian zakavkazskogo kraia*, 4րդ հատոր, Թիֆլիս, 1887, էջ 11, 19-20:

¹³ Նոյն, էջ 20:

- ¹⁴ Այս եւ յետագայ բոլոր ընդգծումներն իմն են:
- ¹⁵ Նոյն, էջ 21:
- ¹⁶ «Նամակ վարդաշենից», *Մշակ*, հ. 34, 29 Օգոստոսի 1874, էջ 2:
- ¹⁷ Araskhantiants, "Ekonomicheskii bit", էջ 21:
- ¹⁸ Երուանդ Լալայան, *Նիժի եւ վարդաշենի ուղիները ազգագրական տեսակէտից*, Երևան, 1926, էջ 6:
- ¹⁹ Ս. Զալալյանց, *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, հ. Բ., Տփլիս, 1868, էջ 397:
- ²⁰ Վետիք Արաս, «վարդաշենի լինարին», *Աղբիւր*, 1885:
- ²¹ «Նամակ վարդաշենից», *Մշակ*, հ. 34, 29 Օգոստոսի 1874, էջ 2:
- ²² Լալայան, *Նիժի եւ վարդաշենի ուղիները*, էջ 6:
- ²³ Նոյն:
- ²⁴ Նոյն:
- ²⁵ V. K. Gukasian, *Udino-azerbaidzhansko-ruskii slovar (Ուղիերէն-աղբիւրջաներէն-ռուսերէն բառարան)*, Բաքու, 1973:
- ²⁶ Յովսէփեան, *Ազնարկներ*, էջ 15, 25, 47, 48:
- ²⁷ Տէս՝ ծանօթ թիւ 11:
- ²⁸ Թ. Մէլքոնեան, [Նամակ Նուխիից], *Արարատ*, Բ. տարի, թիւ 7., Օգոստոս 1869, էջ 81:
- ²⁹ Նոյն:
- ³⁰ Ա. Ս. Շիրվանի, Աղբ. ԽՍՀ Նիժ գիւղի ազգագրական նիւթեր, ձեռագիր, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի ազգագրութեան բաժնի արխիւ, էջ 88-89:
- ³¹ Քամալ Սարգիս, Ուտիական Նիժ գեղի աղաթների, տօների եւ կենցաղի մասին, ձեռագիր, Մատենադարան, էջ 56-58:
- ³² Յովսէփեան, *Ազնարկներ*, էջ 4-5:
- ³³ Արիստակէս վարդապետ (փոխանորդ Նուխույ), «Խմբագրութեան Արարատ ամսագրոյ», *Արարատ*, Գ. տարի, թիւ 7., Օգոստոս 1870, էջ 141:
- ³⁴ Նոյն:
- ³⁵ Ս. Իսրայելյան, *էջեր ծխական դպրոցի ուսուցչի օրագրից*, ձեռագիր, պահուում է դատեր՝ Աստղիկ Իսրայելյանի տանը, էջ 64:
- ³⁶ M. Bezhanov, "Kratkie svedeniia o sele Vartashen I ego zhiteliakh" (Համառոտ տեղեկութիւններ վարդաշեն գիւղի ու նրա բնակիչների վերաբերեալ), *Sbornik materialov dlia opisaniia mestnostei i plemen Kavkaza*, (այսուհետեւ՝ SMOMPK), թողարկում 14, Թիֆլիս, 1892, էջ 215:
- ³⁷ A. M. Dirr, "Grammatika udinskogo iazika" (ուտիական լեզուի ֆերականութիւն), SMOMPK, թողարկում 33, մաս 2, Թիֆլիս, 1909, էջ 1-2:
- ³⁸ Յովսէփեան, *Ազնարկներ*, էջ 34:
- ³⁹ V. K. Gukasian, "K trekhiazichno udin" (եռալեզու ուղիների մասին), *Problemi dvuiazichiiia I mnogoiaczichiiia*, Մոսկուա, 1972:
- ⁴⁰ Նոյն:
- ⁴¹ A. Arzumianian, "Udini. Voprosi etnicheskoi istorii i kulturi" (ուղիներ. էթնիկական պատմութեան ու մշակոյթի հարցեր), *ատենախօսութիւն*, 1987 (պահուում է ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում), էջ 22:
- ⁴² S. M. Kaziev, "Gabala makhalinin gadim tarikhindan" [Ղարալա բնակավայրի հին պատմութիւնից (աղբիւրջաներէն)], *Voprosi istorii Kavkazskoi Albani*, Բաքու, 1962:
- ⁴³ Arzumianian, "Udini", էջ 21-22:

- ⁴⁴ D. K. Karbelashvili, "K fonetike udinskogo iazika" (ուղիական լեզուի հնչյունարանության մասին), *Iazik i mishlenie*, 3-4, Մոսկուա, 1935, էջ 262; A. F. Liaister and G. F. Chursin, *Geografiia Kavkaza: Priroda i naselenie* (Կովկասի աշխարհագրութիւն-ընտելիւն ու բնակչութիւն), Թիֆլիս, 1924, էջ 302.
- ⁴⁵ N. G. Volkova, "Udini Gruzii" (Վրաստանի ուղիները), *Polevie issledovaniia instituta etnografii*, 1975, էջ 110-116.
- ⁴⁶ Araskhantiants, "Ekonomicheskii bit", էջ 19.
- ⁴⁷ Նոյն, էջ 101.
- ⁴⁸ Նոյն, էջ 19.
- ⁴⁹ Նոյն, էջ 101.
- ⁵⁰ Նոյն, էջ 772.
- ⁵¹ Յովսէփեան, *Ավնարկներ*
- ⁵² *Narodi Kavkaza* (Կովկասի ժողովուրդները), հ. 2, Մոսկուա 1962, էջ 195.
- ⁵³ Kaziev, "Gabala makhalinin", էջ 104.
- ⁵⁴ Յովսէփեան, *Ավնարկներ*, էջ 79-81.
- ⁵⁵ Յովսէփեան, *Ավնարկներ*, էջ 75.
- ⁵⁶ Liaister and Chursin, *Geografiia Kavkaza, Priroda I naselenie*, Tiflis, 1924, էջ 302. A. M. Dirr, "Sovremennie nazvaniia kavkazskikh plemen" (Կովկասեան ցեղերի ժամանակակից անուանումները), *SMOMPK, Թողարկում 40*, Թիֆլիս, 1909, էջ 1.
- ⁵⁷ *Boishtaia entsiklopediia* (մեծ հանրագիտարան), Սանկտ Պետերբուրգ, հ. 18, էջ 744.
- ⁵⁸ F. A. Brokgauz, I. A. Efron, *Enciklopedicheskii slovar* (հանրագիտարանային բառարան), Սանկտ Պետերբուրգ, 1902, հ. 34, էջ 583.
- ⁵⁹ Kaziev, "Gabala makhalinin", էջ 104.

CERTAIN ETHNO AND SECTARIAN ISSUES OF
OODEE SELF IDENTITY (XIX-XX C.)
(Summary)

HRANUSH KHARATIAN

Basing his conclusions on a number of 19th century original sources, the author highlights certain self-identity issues of the Oodees in the 19th century.

Though they are mostly assimilated, there are very few Oodees still living in contemporary north-western Azerbaijan, namely in Vardashen and Kutkashen areas.

The author classifies the 19th century Oodees under three groups: a) Oodee-speaking Christians, b) Turkish-speaking Christians, and c) Turkish-speaking moslems. The first group inhabited the contemporary town of Vardashen, and the large village of Nij. The Oodee speaking Christians who followed Armenian rites studied Armenian in their schools till the 1950s. (Till the early 20th century, of these, only those who attended Armenian schools knew Armenian, while those who did not attend Armenian schools, did not.) The Oodee-speaking Christians who followed Georgian rites started studying Russian in their schools in the late 19th century. The sources use mixed expressions in trying to differentiate between these different groups: "Turkish-speaking, and Oodee-speaking villages of Oodee"; "Oodee-Armenian"; "Oodee-speaking and Turkish-speaking Armenian women"; "Armenian people of the Oodee world"; "the Oodee-Armenian community"; "Christian and islamacized Armenians". In many of the original sources the words Armenian and Georgian do not mean "nation", rather they mean people who follow the Armenian or Georgian rites.

Interestingly, however, the Oodees in their intra-communal communications never used the words "Armenian", or "Georgian". They called themselves "Oodees".

To further highlight his observations, the author brings forth a number of late 19th century Oodee tombstones with Armenian and Russian inscriptions on them. Some of these inscriptions identify the deceased as from "the Lusavorich nation and Oodee-speaking race", or from the "Oodee-speaking nation", or "Oodee-speaking race, the Armenian lusavorich", ... the author concludes that Oodee-speaking was the factor which identified the Oodees as members of the Oodee nation.

In his article, the author mentions the Armenian schools of Oodee and hints at the process of assimilation of the Oodee nation into the different nationalities of the region, namely the Azerbaijanis, the Georgians, and the Armenians.